

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ  
ԿԱԺՈՂԻԿՈՄԻ ԽՈՍՔԸ ՄՅՈՒՋՈՆՈՐԴՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԱՐՈՎՈՒԹՅԱՆԸ**

(Ա. Էջմիածին, 22 սեպտեմբերի 2001 թ.)

Սիրելի բարեպաշտ հավաքացյալներ.

Նվիրական ու խորիդավոր այս պահին հիշենք Ամերիկայի Միացյալ Նահանգներում կափարված ահաբեկչության հազարավոր անմեղ զոհերին: Հարգանքի մեր գործը թող հնչի որպես բռնությունների դափապարփություն և ամենուր չարիքի մերժման ու բարու հասկարման կոչ:

**«Այս նյութեղին զանգվածը պանծայի  
պատկերն է երկնքի Արարջիոյ»:**

(Գրիգոր Նարեկացի, Մաքյան ողբերգության, Բան ՂԳ, Դ)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Վերսպին համայն հայոց հոգին է Էջման Սուրբ Սեղանի առջև:

Ամենայն Հայոց Մայր Աթոռը Մյուտնօրիների գոնական հրավերով սիրառապ իր գիրկն է բացել իր զավակների առջև: Համազգային մեր մկրտության և Հայաստանում քրիստոնեության պետքական կրոն հոչակման 1700-ամյակին ձոնված Մյուտնօրինության սրբազն արարողությունն ենք կափարում մեր ազար Հայրենիքի նվիրական հողում, Սուրբ Էջմիածնի հովանու ներք, նորակառույց այս հանդիսադիր Բաց Խորանին: Աշխարհի դարբեր ծայրերից, Հայաստանի բոլոր կողմերից ուխ-դրավորաբար համախմբվել ենք նոր Մյուտնով առ Աստված մեր Ուխսքը ու մեր Հայ Առաքելական միաբանությունը հասպատելու:

Դարակազմիկ հորելյանի խորիրդի ներքո կափարվող Մեր անդրանիկ Մյուտնօրինության առանձնակի բերկրանքով ողջունում ենք մեր Եկեղեցու նվիրապերության Աթոռների գահականներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Պապրիհարք, Ամենապափիկ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պողոս հայոց Պապրիհարք, Ամենապափիկ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին: Ողջունում ենք ներկայությունը Հայաստանի Հանրապետության նախագահ Տիգրան Մանուկյանին, հայրենի պետքական ավագանու և Հայաստանի Հանրապետությունում հավաքարմագրված դեսպանների, օպարերելյա պետքական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:


Միր Մեր ողջունն ենք բերում այստեղ ներկա քոյր Եկեղեցիների շնորհազարդ հոգևոր պետքերին ու ներկայացուցիչներին: Մեր շնորհակալությունը Զեզ, սիրելի

հոգնոր եղբայրներ մեր, որ ազնվորն ընդունեցիք Մեր երավերը ու այսօր կխում եք հավաքափոր մեր ժողովրդի փոնի ուրախությունը: Մեր ողջունը նաև բոլոր նրանց՝ Եկեղեցիների հովապետերին, հոգնոր և պետական ներկայացուցիչներին, մեր Եկեղեցու բարեպաշտ զավակներին, ովքեր չկարողացան մասնակցել փոնախմբությանը Միացյալ Նահանգներում փեղի ունեցած ողբերգական դեպքերի պարբառով:

Հայրական օրինությամբ ողջունում ենք Տիրախնամ մեր Եկեղեցու թեմակալ առաջնորդներին, թեմական և համայնքային վարչական մարմինների պարփառան անդամներին, ուխտապահ եկեղեցականաց ողջ դասին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեծագոնիկ բարերար զավակներին և համայն մեր հավաքացյալ ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռք: Մեր գնահատանքը և օրինությունը՝ գեղեցկազարդ այս կառույցների՝ Սուրբ Տրդադ Բայ Խորանի հովանափոր տիկին Լուիզ Մանուկյան-Սիմոնին և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մուտքի կամարի բարերարներ դեր և տիկին Սենիկ և Անահիկ Գևորգյաններին, ինչպես նաև՝ շինարարությունն իրականացնող ճարպարապետներ Զիմ Թորոսյանին և Ռոմեն Զուհակյանին, Մայր Աթոռուի գլխավոր ճարպարապետ Ռուբեն Ազարյանին, շինարարներ Գրիշա Գրիգորյանին և Գագիկ Գևարյանին, բարեկարգման աշխատանքները գլխավորած Վելքսանդր Անանյանին:

Վյոօր, սիրելի հավաքացյալ ժողովուրդ, ինչպես շարականագիրը պիտի ասեր՝ երկիրը վերսպին երկնքի է փոխվել՝ համակված Մյուսոնօրինների ջերմության շառագույնով, մեր հոգիների աղոթարույրով և մեր շուրթերից առ Ասրված վերառաքվող օրիներգությամբ: Արդարն, միահյուսել ենք մեր աղոթքները, ինչպես մեր նախնիները 1700 վարիներ առաջ, ովքեր ազգովին կանգնեցին Աստծո առաջ, կենդանարար սուրբ խաչով դրյանազրեցին մեր երկիրը որպես առաջին քրիստոնյա պերպություն և Արածանիի ջրերում մկրտվելով՝ դարձան ոխտ մանկանց Եկեղեցվու և Ասրծո: Եվ «երր մրան գերը, սաստիկ լուս երևաց լուսավոր սյան նման...,- գրում է Ազարանցեղոս պարմիքը,- ու նրա վրա Տերունական խաչի նշանը... խկ օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գեփի մեջ շրջան կափարելով, մարդկանց շուրջն էր պարփառմ: Եվ ամենքը զարմացած օրինություն էին փախս Ասրծո»:

Հավաքակերպ այն օրերին նորադարձ հայությունը, իբրև ազգ սուրբ և Ասրծո սեփական ժողովուրդ, նոր ազարագրված և Մեծն Տրդադի թագի ներքո միավորված Հայաստանի դայրերից հավաքվեց երկրի միջնաշխարհում՝ Արարագահայաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Լուսավորիչ Հայրապետի՝ Հայոց Ս. Գրիգորի հետ կարարելու Հայաստանյաց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաջին Մյուսոնօրինները: Նոր Մյուսոնի մեջ հեղինեց Սուրբ Թաղենոս առաջալի ծննդով Հայաստան բերված երանելի յուղը, որ օրինել էր մեր Տեր Հիսուս Քրիստոս: Տերունական յուղն այդ, Լուսավորիչ Աջով շարունակաբար խառնվելով նորանի Մյուսոնին, հասել է մեզ՝ որպես սրբություն սրբությանց, քանզի՝ այս նյութենին զանգվածը,- ինչպես Սուրբ Նարեկացին է փառարանում, պանծալի պափկերն է երկնքի Արարի:



Մյուսոնք ճշմարիդ կնիքն է մեր հավաքի և Սուրբ Հոգու էջքը մեր անձերին. որով Աստվածային շնորհն է բնակլում մեր մեջ՝ սրբագրութեալով ու շարունակ նորոգելով մեզ: Մյուսոնք սրբված՝ մենք դառնում ենք ժառանգակիցը Քրիստոսի և հանձնառու՝ Բարին ընդունուի բարիք գործելու, քանի մյուսոնադրոշմբ ցրում է խավարը մեղքի և լուսավորում մեր մեջ Աստվածակերպ անեղծ պատկերը մարդու: Արարչագործ լուսեղեն այս խորհրդով սուրբ Մյուսոնք ծովակե է հայ կյանքի բանվածքին, ինչպես գոյնը՝ մաշկին: Արքարար կանաչ Մյուսոնք շաղախաված է մեր հող հայրենին՝ նահապակների սուրբ արյան հետ միախառնված: Մյուսոնք հայ ենք, Մյուսոնք՝ քրիստոնյա: Մյուսոնք «հայր մեր ճանաչեմք զՍուրբ Աւելարանն եւ մայր՝ Առաքեական Սուրբ Եկեղեցին»:

Ցորենարիյա շնորհաց սրբալուս Մյուսոնք, ինչպես 301 թվականին Արածանիի շրերում շրջան էր գործում նորադարձ մեր ժողովրդի շուրջ ու կայծկլում խաչանշան երկնառաք լուսերի հետ, 1700 տարի պարույքներ է գործել հայոց կյանքից ներս և միավորել մեզ, գորացքի իրեն հայ քրիստոնյա, սրբությամբ շաղախել ու հավերժին է կամրջել մեր պատմությունն ու ներկան, հայոց բոլոր գալիք դարերը:

Այսօր Մյուսոնօրինության սրբազն խորհրդով վերադիմ ողջազուրվեցին անժամանակն ու անցավորը, միավորվեցին Աստվածայինն ու նյութեղենը, և ծնվեց 1700-ամյակի սրբալուս մյուսոնք հայոց կրելով իր մեջ անկախության ու վերածննի ողին և հավագր հաղթանակների, որով պիտի մկրտվեն մեր զավակները, օծվեն մեր Եկեղեցիները, սրբվի և օրինվի հանուր հայ կյանքն ի սփյուռք, և Աստված պիտի բնակվի ու գործի հայոց մեջ: Արդարն, Մյուսոնք մեզ է սպասում՝ Երկնային Սիլո անուշաբույրով: Ընդունենք 1700-ամյակի Մյուսոնք այն խնդրությամբ, միարանության այն սիրով, որով մեր նախնիք դիմավորում էին սուրբ Մյուսոնք հայոց թեմեր տանող Մայր Աթոռի նվիրակներին:

Տեսնենք նախախնամական դնօրինությունը մեր կյանքում, որով կանչված ենք լինելու ազգ սուրբ և Ասքծո սեփական ժողովուրդ, հրավիրված ենք Մյուսոն կրելու, Մյուսոնք շնորհընկալը լինելու Քրիստոսապարզն ազագությանը և որդեգրությանը հավիտենական կյանքի: Դիրավի, Ասքծո կամքն է առաքելահասքակ Հայ Եկեղեցու Մյուսոնք մեզ հայ պահել, մահաբեր փորձությունների, ավերների, կորուսպների քառուղիներում հարության առաջնորդել, հողմերից աշխարհեաշխարհ սիխոված՝ Հայրենիքով և Սուրբ Էջմիածնով մեզ ու միասնական պահպանել: Ասքծո խնամաքար ներկայության այս գիշակցությամբ ու հավագով ապրենք ու ապրեցնենք մեր սրբերում հայոց Մյուսոնի բազմափայլ խորհուրդը և հեռու լինենք օգարամութ քարոզություններից, օգարացնող ու մոլորեցնող ողդություններից: Ճանաչնենք մեզ որպես Հայ Եկեղեցի, որպեսզի կարողանանք ճիշդ ըմբռնել մեր առաքելությունը՝ իմաստը մեր կյանքի, որպեսզի անսայթաք լինի մեր ուղին և հավել առաջնորդի դեւուի Սուրբ Տաճարն Ասքծո:

Հայոց համագօյային մկրտության լուսեղեն խորհրդի ներքո փառք տանք Բարձրյալին, որ անսարքածության ու բռնության դասնամյակներից հետո այսօր հազարավոր հայորդիներ՝ մեծ ու մանուկ, մեր Եկեղեցու սուրբ Մյուսոնի կենարար դրոշմն

նես սպանում, և օրավոր զորանում է Հայ Եկեղեցին Հայաստանի անկախության հրոշի ներքը՝ հոգևոր անանց արժեքներով զորացնելով պետականությունը հայոց և հանոր հայ կյանքը:

Աղոթենք առ Աստված, որ հայրենական մեր կյանքի վերաշինության լայն ճանապարհին նորոգվի մեր մեջ սուրբ հավաքը Տերունական՝ Սիրո հաղթության հավաքը, որով կյանքն է հայութանակել մյուսոնադրոշմ հայոց հողում ու լցվել արարման քննիքանքով:

Հայցով առ Աստված խնդրենք Երկնավորից, որ եղբայրական սիրո մեջ զորացնի մեր քուր Եկեղեցիները և նրանց հոգևոր առաջնորդներին, որպեսզի օրինությամբ պսակվի Քրիստոսի Տիեզերական Սուրբ Եկեղեցու առաքելությունը՝ հանուն աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու համագործակցության:

Շնորհարաջն այս օրը միակամ ու միաբերան աղոթենք և հայցենք. «Տեր Աստված Ամենակայ, թող իշնեն սրա մեջ Սուրբ Հոգու երկրագելի շնորհները, որ լինի սա անապական զգեստ, կապարելության կնիք...՝ ընդունելու սուրբ անվանակոչություն Միաձին Քո Որդու անվամբ..., լինելու Քեզ ժողովուրդ հարազար, ազգ սուրբ՝ կնքված այս անարար Մյուսոնով և մեր սրբերում բնակվող Քրիստոսով»՝ այսօր և միշտ և հավիպյան. ամեն: